

# ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

## Յ Ո Ւ Ց Ա Կ Զ Ե Ռ Ա Գ Ր Ա Ց

### ՀԱՐԹՔՐԵՏԻ ԱՍՏՈՒԱԺԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Տարիներ առաջ Հարդֆրետ այցելութեան մը առթիւ կազմեցի ցուցակ մը հոն պահուած հայերէն ձեռագրաց հաւաքածոյի մը: Հաւաքածոն կազմուած է Հարդֆրետի Աստուածաբանական շեմարանին համար հանգուցեալ Փրօֆ. Մարտիրոս Յարութիւն Անանիկեանէ, որ կը դասաւանդէր այդ շեմարանին մէջ: Ան հոս ներկայացուած ձեռագիրները ձեռք բերաւ Մերձատըր Արեւելի իր ուսումնական ճամբորդութեանց ընթացքին, շեմարանին նիւթական միջոցներով:

Թիւ 1

ՏՕՆԱՑՈՅՑ, ՏՈՒՄԱՐ ԷՆ.

1658

Թերթ՝ 315: Ծաւալ՝ 9-5×13 սմ.: Գրչութիւն՝ միասիւն, բոլորովիւ, 19 տող, սև մէկան: Նիւթ՝ մաղաղաթ: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառուած մետաքս և բամպակ տպածոյ շահեկան կտորով: Մաղաղաթ պահպանակ ունեցեր է, այժմ պոկուած: Հանգամանք լաւ, սկիզբէն թերթ մը պոկուած:

Պարունակութիւն:

Էջ 1ա. հասարակ խորան և լուսանցազարդ: Կը սկսի «Աստուածայայտնութիւն ճարգալուցին»:

Էջ 42բ. կիսախորան հասարակ: Կը սկսի «Պենտակոստէի գիշերն հըսկունն է...»:

Էջ 68ա. կիսախորանի տեղ պարապ: Ունի լուսանցազարդ և զարդացիր: Կը սկսի «Եւալթերորդ կիրակին վարդավառ է...»:

Էջ 84բ—86բ. նոր գրչէ յաւելումներ լուսանցքներուն: Նաև 90բ. լուսանցքի տակ:

Էջ 105ա. հասարակ կիսախորան ևն. կը սկսի ձայնագրեալ «Թագաւորաց ալէլուք»:

Էջ 145ա. հասարակ կիսախորան ևն.: Նոյնը էջ 212ա.: Կը սկսի «Շարական զգեստու. իորհուրդ խորին անհասըն»:

Էջ 238բ, 253բ պարապ:

Էջ 248ա. «Տաղ Յարութեան»:

Էջ 250ա. «Տաղ վասն մահուան Աստուածածինին»: Ուրիշ տաղեր մինչև էջ 256ա:

Էջ 256բ. Սկիզբն տումարին:

Էջ 264ա. պարապ: Նոտր գրչէ. «Որ ևս Եկամենց պարոն Մինասըս գիր գրէ»: Գրչափորձ:

էջ 274ա. պարագ :

էջ 309բ. պարագ, քերթէն մասեր պատում :

էջ 310ա—313ա. տոմարական շրջանակներ :

էջ 313բ. Կր սկսի «Թվական ՌՁՁ (1637) բանալի առաջի գիրն, ձէն է» :  
Թերթ 314ի ստորին մասը պատում :

էջ 315ա. գլխաւոր յիշատակարան գրչէն : «Փառք... : Որ ետ կարողութիւն փանաքի և տկարն անձին եղիսարեթի. հասանիլ ի յաւարտ տոտիս. որ կոչի տաւնացոյց, Թագաւորաց ալէլուք. տուժարք. և այլ բարում երգք : Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և թշուառ անձին եղիսարեթի. ի նեղ և յանձուկ ժամանակիս վասն բարձմանայ (էջ 315բ) անաւրէնութեան : Ի հայրապետութեան Տեառն Յակոբայ ընդ հովանեաւ Ըստաթէի. Լպիսկոպտութեան Տէր Մեսրոպին և Տէր Պաւղոսին : Ի թվականն Հայոց. ՌձԷ (1658) : Արդ երես անկեալ աղաչեմ ըզձեղ ով մաքրամիտ բնթերցողք որք հանդիպիք սմա կարգալով կամ յարեհակելով յիշեցէք և թողութիւն մեղաց ինդրեցէք զգարչ մեղաւք խոցոտեալ հողոյս և գուք լիջիք յիշման արժանի ի քրիստոսէ աստուծոյն մերոյ աւրհնելոյն յաւիտեանս ամէն :

«Դարձեալ աղաչեմ զձեղ ով մանկունք սրտնի. լի բե...» : Մնացեալը ինկած քերթով կը պակսի :

Եղիսարեթ գրիչ մեր հազուադէպ կին գրիչներէն է : Եղիսարեթ ի Հալիճոք գրած է 1654ին Երևանի քիւ 7113 Շարակիցքր : Այս երկուքը կարելի է հոյնացնել :

Թիւ 2

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

1732

Մաւալ՝ 7.5×12.5 սմ. : էջ՝ 260 : Գրչուքիւն՝ միասին, մանր գեղեցիկ բոլորգիր, 30 տող : Նիւք՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ տախտակ : Հանգամանք՝ լաւ : Սկզբնաքերթին վրայ կարմրաւ բոլորգրով և հետքերով ուս տիւղաւր. «Գուչակունն եղանակաց ի սմա պարունակին աստղաբաշխութիւն տուժարք և տօնացոյցք Լաթիհացոց. Հայոց, և Յունաց ըստ լուսնացոյցին : Յօրինեցեալն յԱստուծէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ : Գրեցաւ 1732 : Մարտի 21» :

Ունի շատ խնամով և մաքուր պատրաստուած աղիւսակներ : Մազկուծ չունի :

Թիւ 3

ՇԱՐԱԿԱՆ

ՃԳ Դար

Մաւալ՝ 9×13 սմ. : Գրչուքիւն՝ միասին, ճախողաբեալ, բոլորգիր, գժուար ընթեռնիլ, 21 տող : Կազմ՝ կաշեպատ տախտակ քայքայուած : Նիւք՝ թուղթ : Հանգամանք՝ վատ : Բազմիցս նարագուած ըլլալով ունի ցանցաճիւղաքերթիւններ : Վերջին սրահպանակին վրայ նոտր գրչէ. «ԹՎին ՌԿԶ (1647) յիշեալ տէր, պատճառ գրոջս սժս է որ սէնր Արդարեանց տիրացու Կոստանդինուպոլսեցոյն զգրէ» :

Ձեռագրին սկիզբը, անգիրքէն. գեղեցիկութեամբ թվական 1647 թ. 11 թ. 11 :

Թիւ 4 (հաւաքման A 195/201)

ՔԱՐՈՁԳԻՐՔ, ԺՈՂՈՎԱԾՈՒ

1302

Թերթ՝ 152: Ծաւալ՝ 13.5x17 սմ.: Գրչուքիւն՝ միասին, տարբեր գրչուքեամբ բուրգեր, հին, 23 տող: Նիւք՝ թուղթ: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ միջակ: Ծաղկում՝ չունի:

Ա. կազմին ետևը գրչափորձ. «Յիշատակ է այս քարոզաց գիրքս Վարդերեսի և որդոց Հանգուցեալ Մարգրիտին Հոգոյն որ ետ ի ձեռն»: Միշտ նոսրգրով. «Գեղզվանքցի տէր Մինասի որդին Աբրահամ վարդապետին»: Նոյնը կրկնուելէ վերջ. «ԹՎին ՌՄՆ (1791)»: Դարձեալ՝ «Հանգուցեալ Վառվառին հարսին Մարիամին զրեցաւ Մանճուսուն գուշն մայիսի 2(6) օրն»: Վերստին. «Հանգուցեալ Ակոր կողակցին Անայ մէկ շապիկ Աննայ Հանգուցեալ Կարապետ... Մարեմ»:

Յաջորդ էջին վրայ նոսրգրով. «Աղաճայ իսնըն տէրտէր Ուշաղի Գրիգոր Նիկողոս»: Իսկ էջին ստորև ութանկիւմ անընթեքնի կնիք:

Էջ 1ա. կայսր Յարգրով. «Վառվառին Մարամին Պաղտասարին Կարապետին ժամուց տիրացու Գրիգորն...ին Լուսիկ...ին...մէկ շապիկ Վառվառ Մարիամ Պաղտասար 1 ժամուց ալթուն, 1 շապիք Հանգուցեալ Առաքելին իւր կողակցուին... Մարամին: 1 ժամուց Մարթին 1 ժամուց սառայ 1 ժամուց Կարապետ 1 ժամուց Կուլիսաթուն 1 ժամուց Արուսիին 1 ժամուց Աթամօղի Ոսճայ Կարապետ 1 շապիք Եղիսայրեցն 1 ճանապայ 1 ժամուց տիրացու Վարդոկ 1 ժամուց Միսակ 1 ժամուց Պայրամ 1 ժամուց տէր Մկրտիչ 1 ժամուց Թորոս 1 ժամուց Աւետիս 1 ժամուց Ակոր 1 ժամուց Ոյհանէս 1 ժամուց Կարապետ 1 ժամուց տիրացու Գէվորգ 1 ժամուց Պետրոս 1 ժամուց Պողոս 1 ժամուց Մելքոն 1 ժամուց Կուլվարզ»:

Թուն ձեռագիրը կը սկսի կարմրաւ. «Յաւսք իմաստասիրաց և ուղափառ վարդապետաց վասն զազանաց և սողնոց և ոչք ի նոսա օսճմանեայ կան»:

Էջ 60բ. գրչէն: «Արք ազաւնձ գամենեանտ գլխի սարկաւազս և զծրնաւուն իմ միոյ տէր որդոսն յիշեալ: և զգրող գրիս զԱսիլ դպիր. և զստացող սորա յիշեալիք ի տէր և սասուում զձեզ յիշե իւր»: Որմէ վերջ. «Բժշկական ատմար: Մեկնութիւն չորից տարից: Ի նմանութիւն չորից յեղանակաց տարոյն խառնուածքին ի մարմնի...»: Կաւարտի էջ 64ա, ուր գրչէն կայ. «Եթէ կամիցիս զիտել յԱղամ մինչև յարև յորում ես եթէ քանի ամ է...»:

Էջ 65ա, գրչէն. «Այլ քառասնաւորեա զալտեան տեառն ի օտճարն»: Մինչև էջ 68ա կէտը, ուր կը սկսի «Գէորդ վարդապետի բանք վասն կանուխ և անագան գատիկ»:

Այս հատուածը հաւանաբար Գէորդ վարդապետ Երզնկացիի գրչէն է: Հրատարակուած չգտայ: Տոմարական շահեկան գործ մըն է:

«Գիցուք սուղ ինչ և վասն տէրուճական լըրճանցն յետ և յառաջ խաղայոյ: Զի թէպէտ և իմաստնոցն յայտնի է այլ բարգաւձ անդամ յաղազ անպատրաստութեան ընդ անձնաւթս առնեն զհաշ: Արք բուն և ստոյղ պատճառ լրճան գատիկին կանուխ և անագան լինելոյն այսինքն զի կատարէ արեղակն ըզտարին յաւուրս ՅԿԵ(365) իսկ լուսին ՅՄԳ(354), ԺԱ(11) աւր պակաս քան զի յամին այն ամաց կեսաւք թողու լուսինն. ի ԺԲ(12) ամիսն 2(6) աւր և Ե(5) աւելեացն որ ամի ամի բարդի ի վերա լուսինն և կոչի վերադիր և ըստ յաւելուածութեան յառաջ վարչէ գատիկն. մինչև յերեք ամն լինի ԼԳ(33) աւր յորում ամի ԺԳ(13) լուսին լինի. և կարի անագան գատիկ: Իսկ Հետագա տարին Գ(3) լինի վերադիրն, և լինի կանուխ գատիկ: Եւ ի մատչիք այսպէս: Զորուելինակ

Թաղաւորք, երկուս սպասաւորք կարգէ, Հաց և դինի պատրաստել ի պէտան, և որոյ Հաց կրնն զործ անկողփոխ ի Դ(4) աւրն կատարէ դերթն ու դարձան: Իսկ դինեբերն երբեմն յերեւո, և երբեմն ի Դ(4): Եւ դի ի Հինգ ևս և ի վեց կամեցուալ Թաղաւորին խրախճանութիւն առնել, առաջէ դիտաւ բերել զՀաց և դինի և թէ զուշաչափ դիպեցի երկուցն ճանապարհն. դրեթէ առաքեալք ի շորեղչարթի ոչ դարձան ի շարաթու, և իսկոյն ընդ այգանալ կիրարկէին առնէ խրախճանութիւն, իսկ եթէ դինին յամեաց հարկ է մնալ մինչև եկեսէ, ի հինգերորդ կամ ի վեցերորդ աւուրն անազան կամ ևս անազան: Ի վերայ այտորիկ և կիրակէի ևս հարկ է մընալ խրախճանութեան: Արդ է Թաղաւորն աստուած և արքունիք աւստի ընթանան դարնանամուտն խրախճանութիւն սուրբ դատիկն, և սպասաւորն արեդական և լուսինն Հացակերն անհաւասար, վասն ժԱ(11) աւուրցն Թողլոյ առնէ զտարին աւուրս ԾԾԴ(354), ԾԿԵ(365), ԾՀԶ(375), ԾԶԷ(387): Գիտեմ զի սուղ ինչ զանազանի ի գրելոցն զոր ասեմս այլ վասն նոր այտնիցն զլուրահասութեամբ այսպէս եղի: Եւ զի նախ պարտ է դարնանամուտն լինել և ապա լրուանն զատիկի զի տարոյն մուտ դարունն, և ուշաբարիս լինելութեան ժամանակն երթիցուք մտաւք աւրն յորում եղեն լուսաւորքն որ է քսանն Մարտի ամսոյ յորում աւուր սկսան զընթացս տարոյն: Արդ եկ դու ինձ աստանուր ըստ առաջին պայմանին նկատայն զՄարտի քսանն սկիտքն ընթացից արեդականն և լուսինն աւր առաջին, որ թէպէտ ի միում աւուրս սկսան, այլ վասն կէսկէս աւուրցն թողլոյ ամսոյ ամսոյ ժԱ(11) աւուրք յառաջ կատարի լուսինն զտարին երկոյտասան լրամբ: Սկսեալ ընդ արեդականն ի քսանն Մարտի կատարէ շրջապատեալ հասեալ ԻԸ(28)ն Մարտի, և առեալ ծնունդ Ի(20) յինն Մարտի. սկսանի նոր տարի յառաջ քան դարեդական:

«Գայ և արեդական դկնի նորա և կատարի զտարին ԺԹ(19) Մարտի և սկսանի ի քսանն նոր տարի: Լուսինն զի կանուխ սկսաւ լինի յայնմ աւուր միտասանաւրեայ այսինքն ի քսանն Մարտի, յորոյ ի քսան և Հինգ լրացեալ առնէ զատիկ. Ժողովի ապա ի վերա նորոյ առաջին և երկրորդ ամին վերադիրքն այսինքն է աւուրք ԻԲ(22), և թէպէտ և փութայ զարձեալ և զտարին զոր ըստ կուս յինն Մարտի, ԺԲ (երկոտաս)ան լուսնոյ կատարէ ի ԻԷ(27) Փետրուարի, այլ զի կարի կանուխ է քան զհասարակածն, յաւելու ի վերա նորա և երրորդ ամին յաւելուածն, որ նա ինքն վերադիրն, այսինքն ԼԳ(33). Հարկ առնէ ի նրմայ յայնմ տարոյ ԳԺ(30) առնէ զլուսին վասն ամի ամի յաւելուածին իրքորս լինելոյն նմին իրի թէպէտ կարի կանուխ էր ԲԺ (երկոտաս)ան լուսնին զոր կատարեցաք ի քսան Ե(5) Փետրուարի, այլ յածին ի վերայ նորայ ամսոյ միոյ կարի Հևղականայ քան զարեդական, զի զծնունդն զոր առնէ, ի ԻԶ(26) Փետրուարի լրացեալ ԺԲ(12) Մարտի, և բովանդակեալ զայն ի ԻԶ(26) Մարտի դկնի հասարակածին, և ԻԷ(27) Մարտի առեալ ծնունդ, սկսանի իւր նոր տարի, և լրացուցեալ զինքն ի ԺԲ(12) Ապրիլէի կարի Հեռացեալ ի դարնանայմտէն առնէ ի դուրս դատիկ: Բայց պատճառ կիսոցն զորս թողու լուսինն է այս: Զի որպէս սախ բան զարեդական ընդ առաւաւտն է ստեղծուած և զլուսինն ընդ երեկոյ, և ի ստեղծման լուսնին ժԱ(11) մասն պակաս էր յերկոտասան ժամուց արեդականն, և այն ժԱ(11) մասն ամենայն աւուր Ժողովի ի վերա լուսնին. և լինի ի յամիսն ժամս ժԱ(11) և ի տարին աւուր ժԱ(11), և այս է պատճառ նախասացեալ լրամնցըն կանխելոյ և անազանելոյ: Բայց գոյ տարադոյս՝ զի թէ յարեդականէն էր ժԱ(11), մասն պակաս ի վերա լուսնին է՞ր ան:

«Զի զայնքան մատնարն Թւոյից լուսնին դեռ ևս արեդական իշխէր՝ և ոչ լուսնին: Վասն որոյ զոր ընդ լոյս արեդականն եկն յիւրն պակասեցոյց յիշխանութենէ, զի զերկոտասան ժամք ի լրոյն ո՛չ ժամանեաց լուսաւորին՝ զի

մինչդեռ ժԱ(11) մասն պակաս էր ի դիշերոյն ի մայր էմուս չև ևս ծագեալ ամբողջական, և խաւար մնաց դիշերոյն մասունս ժԱ(11), որ և աւուր աւուր ժողովաւ ի վերս նորա լինի յամսեանն ժամս ժԱ(11) որ է կեսաւր սուղ ինչ պակաս րատ ԻԴ(24) ժամուց աւուրն» :

էջ 93ա. «Վասն ցանկութեան» :

էջ 96ա. «Երաներոյն Եփրեմի» :

էջ 97ա. «Յուհանու Ոսկերերանի յաղազս պահոց և աղաթից և խոստովանութեան» :

էջ 117բ. «Թ Հարանց վարուց» :

էջ 127ա. «Պատճառ աւուրց արարչութեան» :

էջ 134բ. «Յաղազս սուրբ մարտիրոսացն» :

էջ 143ա. «Պատճառք Երկրորդ Գալլստեանն» :

էջ 147բ. «Վասն թուականաց անցելոց . . . ի քրիստոսի ծննդեանն մինչև ի սուրբ Գրիգոր, ամբ. ՅԶ(306) . ի սուրբ Գրիգորէ մինչև ի Հայ թուականն ամբ ՄԽ(240) . յկգամայ մինչև ի Հայ թուականն ամբ ԵԹՄԱ(5751) : ՅԱգամա մինչև յայս տարիս որ է ՉԾԱ(1302) , և ՁԻԷՃԱ(6701) տարի է : Ի քրիստոսէ մինչև ի յայս ՌՄՂԶ(1296) . ի սուրբ Գրիգորէ ամբ ՁԷ(990)» : Հոս նկատեմք որ Քրիստոսի ՌՄՂԶ(1296) չի համապատասխաներ Հայոց ՉԾԱ(1302)-ին : Քրիստոսի թուականը մեր գրիչներէն սովորաբար գործածուած չըլլալով նման սխալներ կը պատահին : Մեմք գրչութեան թուական ընդունցեմք ՉԾԱ(1302) :

Շարունակելով «Գրեցաք վասն յետին թուականին» և կը տրուի հետևեալ ժամանակագրութիւնը : «Թ թվին ԿԷ(618) ելն սաճկաց ի Հայք . ի թվին ԾՃԷ(1106) . ելն սուլտանացն որ սալլուքիկ կոչեցան . ի թվին ՈԿԹ(1220) թաթարին ելն . ի թվին ՈՂԴ(1225) խորագմին ելաւ . ի թվին ՈՂԷ(1228) . սուլթան Յայատինն էառ զեղնկան : Ի թվին ՈԶ(1231) . Սոխնոցին կոտորուին ի թաթարէն . ի թվին ՈՂԱ(1242) . սուլթան Յայատին մեռաւ և նստաւ Ղիաթատինն . Պաչաւն էառ զԿարնու բաղաք . ի թվին ՈՂԲ(1242) . էառ զԱնաստ և զԿեսարիա և զԵղնկան . ի թվին ՉԱ(1252) . մորեկն կերաւ զվաստակն որ սով եղաւ սասարիկ . ի թվին ՉԳ(1254) . չարժ եղև սաստիկ որ Եղնկան անցաւ . ի թվին ՉԴ(1255) . Պաչաւն եկն և զնաց ի Հոռամք (Սելմուզներու երկիրը) և կոտրեց դուռդանն . ի թվին ՉԵ(1256) . Պատաղան եկն յԵղնկան . ի թվին ՉԶ(1257) . սուլթան Յագատինն և Հոռուզատինն կոմեցան ընդ իրար . ի թվին ՉԺԴ(1265) . ադի որ սատղն ելաւ յարեկէլս . մեռաւ Հուլսունն և նստաւ Ապաղան . ի թվին ՉԺԴ(1265) Տէր Սարգիս սուրբ եպիսկոպոսն Եղնկային զնաց ի թագաւորութիւն ի Ստրմպաւն Հրամանաւ Հուլսունին և էրբր գիէսպինան . ի թվին ՉԻԲ(1273) Տէր Ներսէսի նշխարքն երևեցաւ . ի թվին ՉԻԵ(1276) . Տէր Սարգիս ըսպանաւ ի Տութարէն ու ի Չալապուն . ի թվին ՉԻԶ(1277) . Ապաղան եկն յԵղնկան բաղում ճեծելաւ . ի թվին ՉԼԱ(1282) . Ապաղան մեռաւ և նստաւ Աճմատն դան . ի թվին ՉԼԳ(1284) զվոք սուլթանն սպանին յԵղնկան . ի թվին ՉԼԳ(1284) . Աճմատ դանն սպանաւ յԱրդունէն և նստաւ Արդունն դան : Ի թվին ՉԼԳ(1284) . Հուլսուն և Քեղաթուն յԵղնկին դաշտն ձմերբցին . ի թվին ՉԼԸ(1289) չարժ եղև յԵղնկան և բաղումք կորեան և Եղնկան անցաւ . ի թվին ՉԱԱ(1292) Արդունն զեղով մեռաւ ի մեծամեծաց իւրոց . ի թվին ՉԱԱ(1292) . Ծընագատիկն . ի թվին ՉԱԲ(1293) . Հոռոմկլան առաւ ի մարցուն և աւերեց . ի թվին ՉԱԴ(1295) . Քեղաթուն սպաննաւ և նստաւ Պաչուն : Ի թվին ՉԱԴ(1295) նստաւ Պաչանն դան և Հրամանք ելաւ ի Պաչանէն և ի Նաւուզէն . վարն աւերմանց եկեղեցացն . և խոցատել զքրիստոնեայս . ի թվին ՉԱԵ(1296)

Ուրբթու դանն մեծ հեծելաւ է հոռամք էմուտ որ զՊալթան բռնէր. և Պարթաւն փարսեաւ և զուրդան բռնեց և տարաւ. ի թվին ՉնՉ(1297). Մըբաւ թուրքաւորն զնաց ի Սազանն. և կին էառ բազգէն զանին: ի թվին ՉնԷ(1298), լուսինն խաւարեցաւ սաստիկ որ ՚ի (երկու) պահ չերեցաւ. և ասող մի երեւցաւ աղևոր: ի թվին ՉնԷ(1298). Պաշխրան երեկ վասն թուրքանին. ի թվին ՉնԸ(1299). Սուլամիչն մտեց ի Սազանէն և սպան զհայանչարն և զՊիտոսն որ է հոռոմք արդուհէք էին. և հրամանք ելաւ ի զանէն որ շարժեցաւ թաթարն. և վրացին. ի թվին ՉնԸ(1299). եղև յերկար և պինդ ձմեռն որ պտղաբերքն մտեցան. և հեծելն թաղոով անցոյց զերկիրս և սպա զնաց ի հոռոմք վասն Սուլամիչին. և Սուլամիչն փարսաւ և հեծելն դարձաւ ի զանն ի թվին ՉՄԱ(1302) ի Նաւասարդի ամսոյն ի ԺԵ(15). բռնովեցաւ լուսինն: ի թվին ՉՄԳ(1304). Սազանն խանն մեռաւ և նստաւ ի յաթոն Սարբանդան խան ի թվին ՉՄԴ(1305). Սաթառու շուրն երեկ յեղբնկան և բազում մնաս արար. ի թվին ՉՄԴ Ամբար աղան երէկ մեխիք եղբնկիս. ի թվին ՉՄԸ(1309) Պուլար զան երեկ եղբնկին մեչիք. ի թվին ՉԿԲ(1313) Հալառն խան Ինուրուին թաթարն յայտդիս անցաւ ի թվին ՉԿԴ. (1315). զՄեյխիսինի աւերեց շամցին (Դամասկոսցիս) և շատ հոտորեց. ի նոյն ամի Լուլուն եղբնկին մեչիք էր. զտանուէր քաղաքին ի մուտանն էհար սրով. և բազումք մեռան և այլք կիսամահ եղան. Ղաչթան երեկ ի զանէն ու բռնեց զԼուլուն ու շար չքեց ու ՚ի սուֆրան ի դիր ու ի կախարն էր դիչերն. թվին ՉԿԵ(1316) Սարապանդա զան մեռաւ և նստաւ Բուսաիդն զան. թվին ՉԿԶ(1317). ի թվին ՉԷ(1321) թուրքերն ի յեղնկան դիրեց մղկիթն սուպակնեցին վասն թասիպուլթեան և աստուած խափանեց. սպա վասն թասիպուլթեան պարոն Յոանկն սպանին և ի նոյն ամս Դամուրդաչն եմուտ Կիլիկէ և աստուածային զարուլթեամբն պահեցաւ երկիրն Հայոց: Եւ էր յեղնկատ մեչիք Լուլուն և եղև խիստ խաշնամահ»:

Տարբեր գրչի: «Դամուրդաչն և բազում դանուլթին անցոյց յազգս Հայոց հարկապահանջութեամբ և վասն հաւատոյ սասանէր ազգս Հայոց. իսկ արարիչն ողորմածութեամբ հայեցաւ ի տկարութիւնս մեր և յարոյց ի վերս որդոյն զհայրն զՉապանն: ի թվին ՉԶԳ(1324)ն որ երեկ ի մէջ ձմեռն բազում զարաւ: ի հոռոմք բռնեց և տարաւ ի յորտուն և էր մեյլեց յեղնկա Փերաւտին: ի թվին ՉԶԴ(1325) զնաց Չոպանն բազում զորաւք ի ներք ի թաթարն և շոյտ դարձաւ վասն ահի: ի թվին ՉԶԵ(1326) դարձեալ երեկ Տամուրտաչն ի հոռոմք ի վերս իր հակառակացն: ի թվին ՉԶԶ(1327) Չոպանն զնաց ի Սորասան դիմացն ներքս ի տաթրին (թարարիս) և նոյն ամն զհեղեղն զթափոթ տարաւ. և ի նոյն ամն Չոպանն ի Պոսայիդ խանէն փարսաւ և մեռաւ: Եւ նոյն ամն Տամուրտաչն ի հոռոմք բազում շարիս գործեաց և զեղնկին կէս երկիրն աւերեցին և փարսաւ ի Մար (եգիպտոս) և անդ սպանաւ ի սուլճայ: ի թվին ՉԶԷ(1328) բազում շարիք հատուցին Եգիպտոս պարոնայն, զՄիբ Մահմատուն որ ի Տամուրտաչին տեղն էր՝ և Մուսապարն և Ղատին որ Սահպոյ Դիւանէն և հոռոմոց»:

Դարձեալ հին գրչի: «Ի թվին ՉԶԸ(1329) Եղնկիս տանուտերքն ի վեր ի խանն զնացին ու զխարաճն ու այլ շատ շարեր բարձին Պուսաիդ խանին բանիւ և ոչ զնաց յատաջ ի շար պարոնացն ձեռաց: ի թվին ՉԶԹ(1330) Էպիսկոպոս Տէր Սարգիս ի վեր ի Պուսաիդ խանն զնաց: ի թվին ՉԶ(1331) դարձաւ եպիսկոպոսն պատուով. ի թվին ՉԶ(1331) երեկ ի յեղնկա հոռոմաց Սահպոյ Յապատին քաշին ու խաննով շատ մալ էաւ: ի թվին ՉԶԱ(1332) երեկ ի Կամախ Ազնատան ու Շեխ Հասանն իր օրդին»:

Տարբեր գրչի: «Ի թվին ՉԶԲ(1333) Տամուրտաչին օրդին Շեխ Հո-

ասան եկն ի յեղնկաս և խոտ Հարկապահանջութեամբ նեղեաց զարդս զբոտո-  
 նէից. ի սոյն ամ զնաց ի Հոռոմք և տիրեաց Հոռոմաց. ի թվին 226(1336) մե-  
 առ Պուսայիչն զանն և նստաւ ի տեղի նորա Արփաբայունն կիսամ և սպանաւ  
 ի դաւրաց իւրոց և եղև խոռովութիւն ի մէջ նոցա : Ի սոյն ամ նստաւ ի տեղի  
 նորա Մուսայ խանն Գ (ԿրքԷ) ամիս : Ի սոյն ամ զնաց Շեխ Հասանն որդի Ալ-  
 ճաթային ի յաւրդան և եբարձ զՄուսա խանն և ետ իր զԱճմատ խանն տարի մի  
 և էր յեղնկաս մելիք Այնա պակն : Ի թվին 227 յայտնեցաւ... Տամուրտսն  
 Համբաւով և ինքն և իւր որդին Շեխ Հասանն միաբանեցան և եկին ի վերայ  
 Եզնկին և սղարեցին (պաշարեցին) զամիս Գ (չորս) . և դարձեալ զնացին  
 յաւրտուն և եղև պատերազմ և սպանաւ Աճմատ զանն և կայր աշխարհ ի տարա-  
 կոսի վասն անխառնութեան և Եզնկա ի մեծ տարակուսի : Եւ ի սոյն ամ Յա-  
 բաթնան սղարեց զՄուսատ մինչ ի սոյնուն նեղեալ տուին զբողաքն :

Տարբեր գրչէ : « Ի թվին ՆՀԸ(1029) . եղև ահաւոր նշան ի Ե (հիմզ)  
 Հսկտեմբերի . պատճառեցաւ Հաստատութիւնդ և Հերձաւ երկինք , յարեկից  
 մինչև ի մարտ և լոյս Հոսէր յերկիր . և եղև ահաւոր զոչիւն և խաւար . երևէին  
 աստեղք որ պատմեաց . Կողէրն... » : Քաղում Մատրէոս Ուռնայեցիի պատ-  
 մութեմն , իսչակալութեան մասին : « Եւ այս էր պատճառ յերանելոյն , զոնդի  
 մինչ արեւին սկիւթացիք յերուսաղէմի , և առնուին վարձս ի մտերոցն ի սուրբ  
 Գերեզմանն . զիւրեցաւ (էջ 150թ .) կոմս Փռանդ աղպաւ | զի անչափ դանկցին  
 զնա (մանմեռակամք) մինչ խրեցաւ ակն նորա զոր առեալ պահէր , և դարձեալ  
 ի Հոռոմ ցուցանէր , և ի նախանձն շարժեալ երանէին փառօր զլլաւորքն բա-  
 ցում զորաւք . և եկեաւ յաղթեն , զնլիճ Ալուն սուղանն . Բ (երկու) անգամ :  
 Առին զԵրկիւրայ , և ետուն յկէքն : Առին զերուսաղէմ և եղին թագաւոր ի վե-  
 րայ նորա որ է թագաւոր յերուսաղէմի ՅՌ(300,000) ձիաւորով եհար զՄայա-  
 Հատինն ի գուռն Երուսաղէմի . զօրութեամբ սուրբ խաչին որ էր ձնՌ(140,000)  
 զօրք զի առնոյր զերուսաղէմ . ԿՌ(60,000) ուղա ջրաբեր էին զհետ նորա . յա-  
 տաջ ՈւսուՓ էր անունն » :

Տարբեր գրչէ : « Ի թվին 228(1300) եղև որով աստուիկ յաշխարհն Հո-  
 առոմոց , ևս առաւել ի Մուսատ զի եղև շինիկ մի ցորենն Յ(300) սպիտակ . և  
 նուկի մի և կէս Հացի Ա (մէկ) սպիտակ : Գարշելի իրք ու զշունս , և զկատուս և  
 ... զմիս մեռեալ մարդոյ . ո՛հ դառնութիւն ի Կեսարիա ըմպոնեցին կին մի որ  
 հերիս արարին . Ի2(26) լիւր մարդոյ եղ իր ծախելն և յերկարեց սոյն տարի  
 մի և կէս » :

Ասիլ սարկաւագ կամ դպիր գրած է Երևանի թիւ 1098 Ժողովածուն  
 1320ին և թիւ 1276 Մեկնութիւն Եզնկիէլի 1322ին : Հիմ բաւորգրով այս ձեռա-  
 գիրն ալ՝ 1302ին :

Թիւ 5  
 ԵԱՐԱԿԱՆ  
 ԺԳ Դար

Մաւալ՝ 11×16 սմ .: Գրչուքիւն՝ միասին , նոտր դրչութեան նմանող  
 հին բոլորգրով , 25 տող , ձայնագրեալ : Նիւք՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ  
 տախտակ , Մաղկաւմ՝ Հասարակ : Հանգամանք՝ թէև սկիւրքէն և վերջէն պակա-  
 սաւոր , սակայն լաւ : Սկիզբն ու վերջը երկուական թերթ մազաղաթ , յատը-  
 նեղէն :

Թիւ 6

ԱՒԵՏԱՐԱՆ

1299

Գրչուքիւն՝ երկուսն, համարարառեալ, 19 տող, բոլորպիբ: Նիւք՝ թուղթ, կազմ՝ կաշեկապտ տախտակ: Պատկանակ՝ սկիզբն ու վերջը երեքական թուղթէ Աւետարանէ մը: Համալուսնի՝ ըստ երևոյթի կրակէ ազատուած: Խոնաւութենէ վնասուած: Վերակազմութեան ատեն լուսանցքները կտրուած: Մտնարանկարչութիւն՝ շահեկան է Յովհաննու սկիզբի խորանը, և քանի մը լուսանցազարդեր: Մնացեալը վերանորոգութեան ատեն կանաչով և մութ կարմիրով պատրաստուած, Աւետարանիչներու նկարներ, խորաններ և այլն:

Պարունակութիւն:

էջ 1ա. պարագ:

էջ 1բ. Մատթէոսի նկարը:

էջ 2ա. սկզբնախորան, և այլն:

Ղուկասի վերջը, գրչէն կարմրու: «ՉՄարգարէ գրիչ որ բազում աշխատութեամբ գրեցի զսուրբ աւետարանս յիշնՉիք ի տէր քրիստոս և աստուած որ առանն է ողորմութեամբ...» և այլն:

Յովհաննու վերջը գլխաւոր յիշատակարան բուն գրչէն: «Տէր աստուած... ի յամս Հայկազեան թուարեքութեան տուժարին յորում էր թիւ համարք թուականին թորգոմեան տոճին ՉԽԸ(1299) աւարտագործեալ եղև սուրբ և կենսատու աւետարանս... (կը տրուի աւետարաններու գրւելու մտաւորութիւնը) ... գրբ իմ անբժանի և անպիտան և սուտ անուն կրանաւորի որ տեսի զաւրինակ գովելի և անսղալ վկայեալ ի բազմաց. և ցանկացող հղէ որպէս պատուական մարդարտի և զրեցի զոս իմ անիմաստ և տկար մտաքս, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս. արդ ազայնմ դամենեսեան որ հանդիպիք սուրբ աւետարանիս, զմեղապարտ դժոզս Ստեփանոս, և զճնողսն իմ, և զեղբարսն իմ յիշնՉիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր:

«Նաև զհոգեւոր եղբարս իմ զՄովսէս կրանաւոր և զճնողսն նորա, և զեղբարսն իւրայաւքն հանդերձ ամեն, և զհայր վանիցս զՅովհաննէս քահանայ և զայլ կրանաւոր եղբարքս, և զմիաբանք սուրբ ուխտիս և զառաջնորդ պաւառիս զառաքելւոյնորհ և զայատուական հայրապետս մեր զՏէր Միխիթար և զճնողս նորայ որ հայրական գթութեամբ իւրով զաւրինակս պարդեհաց: և է յսյժ երախտաւոր մեզ: Յիշողացդ և յիշեցելոցս ողորմեցի: Քրիստոս աստուած բարեխաւսութեամբ սուրբ ծնողին իւրոյ, և սրբոց հրեշտակապետացն ուրոյ այսեր էր յիշատակս, յաւուրն համառատի և նմա փառք նաև զիտհեմամիտ առաքելւոյնորհ և զպաճայի և զանյախիթ բարունիս մեր որոյ անուն Պսակ ճանաչի. որ բազում աշխատեցաւ ի սուրբ աւետարանս զոր մէք յրբացաք և հարկեցաք զոս որ գրեաց զղլխաւոր գիրս. Թ. և ՃԿԲ(1162). յիշատակ իւր հոգոյն և ծնողաց իւր և զարմաց կենդանեաց և հանգուցելոց»:

Թիւ 7

ԿԻՒՐԵՂԻ ԿՈԶՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ

1708

Ծաւալ՝ 16×26: Գրչուքիւն՝ նորոգիք, սկիզբը երկուսն մինչև Ե պրբակ և անկէ վերջ միասուսն, սև մելան, գրչութիւնը բաժնուած լուսանցքներէն:

կարմրագլխով : Տոզ՝ 30 : Նիւթ՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ տախտակ : Համ-  
զամանք՝ քայքայուած, թէև լաւ :

Պարտուակութիւն :

Կը սկսի ռսկեգիծ գունագեղ խորանով և լուսանցազարդով :

Գլխաւոր յիշատակարան գրչէն ձեռագրին վերջը : «Փառք... րեցի և  
կատարեցի զծաղկահաւաք մատենան սրբոյն Կիւրղի որ կոչի Կոչումն Ընծայու-  
թեան . որ էր դրած ի սուրբ արանց ի Հին ժամանակի և անորդ ընկեցեալ կայր  
ի մէջ աղբուսաց եկեղեցոյ . և իմ առեալ թափ տվի ի յաղբէն , և տեսի փտտեալ  
և ցեց կերեալ . և զիրն անուպա երկաթագրին յանհարմարն . մնամ թէ վասն դը-  
րին անընդունելի և ընկեցիկ եղեալ էր . և ես ետնեալ և մեղաւորս և անպիտան  
Լաչին Կիլիկեցի փառաբանօք զսայ գրեցի . ոչ եթէ զկատարեալն , ոչ մէկ գը-  
խէն մինչև ի չորսն չկայր . ի Հինդ զլսէն ըսկեցի գրել . չորս մնաց առաջնոցն .  
եթէ ի զկալող ժամու զաստեմ զան ևս ի վերջն , գրելոց եմ պատուծով : Ո՛վ իմ  
խոհեմ եղբայր զսայ գիրքս որ ես գտի գրեալ էր վաղուց ժամանակաց ի յառա-  
ջին թաղաւորաց Հայոց և յիշատակարանս նորա գրեալ էր թէ երկրորդ նորո-  
գումն գրոյն եղև ի թվին ՆՂԸ (1048) . և դարձեալ գրեալ էր թէ երրորդ նորո-  
գումը եղև դրոյս ԸՃԸ (1359) և չորրորդ նորոգումն էր ՌՀԴ (1625) թվին այս-  
պէս անձման մատենան ո՛չ կարդացող կայ ո՛չ քննող . վայ մեզ որ յամենայն  
զրկեալ եմք վասն մեկուց մերոց և անարժէտութեան մերոյ . անտէր և անայցե-  
լու լինելով . . . Դարձեալ անպիտան յետնեալս ի յամենայն բարեաց Լաչինս  
գրեցի զսա յեռափափաք սիրով ի թվին Հայոց ՌՃԾԷ (1708) ի հոկտեմբերի ԺԴ  
(14) օրն ի վայելումն անձին իմոյ : Դարձեալ ով իմ սիրելի եղբայր յիշեցէք ի  
ժաբարափայլ յաղօթն ձեր . զեղկելի գրիչս և զկողակիցն իմ զՍանդաղէն , և  
զորգիքն իմ զԱլթունն և զՊողոսն և զամենայն մերձաւորս իմ . Դարձեալ յիշեա-  
ցէք երկնազնաց յաղօթն ձեր զհանգուցեալ Հայրն իմ զՊողոսն և զմայրն իմ ըզ-  
Մարիամն , և զպապս իմ զմահտեսի Լաչին և զմամն իմ զԱլամինն և զամենայն  
հանգուցեալսն մեր միով հար մեղալիւ , և յուսկ կտոյս զԼաչին գրիչս յիշեցէք  
և զմեղացն իմ թողութիւն հայցեցէք , և կողակցոյս իմոյ Սէնդաղէին և որդո-  
ցոյս յԱլթունին և Պողոսին և զմեզ յիշողք յիշեալ յիջիք յառաջի առաջի մե-  
ծին աստուծոյ ամմէն :

Լաչին գրիչ գրած է երևանի թիւ 1453 ժողովածուն 1692ին ի թախթա :  
Իսկ մահտեսի Լաչին մը ստացած է 1616ին և 1624ին գրուած երևանի թիւ 7369  
և 7370 Ցայսմաւուրքնը , կաճա գրուած : Յիշատակարանը կը յիշէ Մահտեսի  
Լաչինի Յսեցի բլլալը . քան մը որ մեզ կը փոքալերէ զինքն Առյուծաբնի մեր վերի  
գրչին՝ Լաչին Կիլիկեցիի պագում հետ , որ կը յիշուի իբր Մահտեսի Լաչին  
իւր թռուս յիշատակարանին մէջ :

Թիւ 8  
ՇԱՐԱԿԱՆ  
ՓԷ Դար

Ծաւալ՝ 8x11 սմ . : Գրչութիւն՝ միասին , բոլորգիր , 19 տող , ձայնա-  
գրեալ : Նիւթ՝ մագաղաթ : Կազմ՝ կը մնան միայն տախտակները , Հանգամանք՝  
խոնարութենէ գրութիւնը , նկարներն ու ծաղկումները սեղ տեղ փճացած ,  
աւրուած :

Թիւ 9

ԱՒԵՏԱՐԱՆ

1658

Մտաւ՝ 16×22 տ. : Գրչութիւն՝ բոլորպէք, երկսին, 23 տող : Նիւք՝ մագաղաթ : Մանրանկարչութիւն՝ ճոխ կերպով, թէև սովորական ոճով :

Գլխաւոր յիշատակարան գրչէն Յովնանու վերջը : «Փառք... Արդ այսմ աստուածայտոտում և քրիստոսաւանդ ստառիս ցանկացաւդ եղեալ այրս այս ամենայն առաքինութեամբ զարդարեալ խոճայ Կարապետն ետ գրել զսա յիշատակ Հոգևոյ իւրոյ և իւր ծնողաց, և իւր եղբարցն ի պայծառութիւն սըրբոց և կեղեցւոյ : Ի թուարեցութեանս Ասքանագեան և Յարեթական տումարի ՌՃ և Է. (1658) և Լ(30)ս նորում շրջանի. ՍԱ(41) և ի գալստենէ կենարարին. ՌՌՄԸ(1658) և յեղիցն Աղամայ ի դրախտէն ԻՁԱ(7081). Ի Հայրապետութեան Տեանն Յակոբա. և յառաջնորդութեան ամենայն Հիւսիւսական կողմանս Տէր Գրեգորի աւրհնաշունչ քահանայապետի զոր տէր աստուած պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ : Բայց զրեցաւ սայ յաշխարհս Հնոաց և յերկերս Ղրիմի ի Հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս որ կոչի Կաֆա ընդ Հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրափարին, և այլ քաղմաճաւաք սրբոց ձեռամբ Նիկողայոս ոմն անարժանի : Այժմ ազաշեմ դամենեսիան գդասս լուսեարմից. որք Հանդիպիւք այսմ աստուածային խրախճանութեան յիշեսջիք ի մաքրափայլ յազաւթս ձեք զփափաքմամբ ստացաւդ սորա խոջայ Եսակիւլին զեղբայրքն իւր զՆահապետն, և զԿարապետն որ պատճառ եղև ի գրելն սորա. և զՍևականն և զեղբարորդիքն իւր զՀայրապետն և Զաբարիան և զԲարդաւմն, և զՃլաւխանն, և զԾնաւազան իւր Զաբարիան և զԿիւլիճիճիւնն եղբարց կողակիցն իւր զԵփիւլտանան, և զԱղամն և զԵթերն և զամենայն արեան զմերձակայսն իւր : Նաև զուսուցիչն իմ զՀոգոյ զՏէր Զաբարիա սրբազան քահանայն յիշեսջիք ի տէր սէռն սիրով որ բազում աշխատանք կրեց ի վերայ մեր, զոր տէր աստուածն ամենայնի և նմա ողորմեսցի ի միւս անդամ գալստեանն ամէն : Նաև թէ արժանի Համարիք անարժան գծաւզս զՆիկողայոս մեղապարտ ծառայ ծառայիցդ աստուծոյ և զԾնաւազս իմ ցաւակցարար յիշման ի փառաւոր և ի սոսկալի ատեանն ...» և այլն :

Ներքին կողքին վրայ մատիտով : «Բարեբախտութիւնը ունեցանք տեսնելու այս ընտիր և սուրբ մատեանն 1887 Հոկտեմբեր 17 Բերդակ : Պօղոս Պարեան Բարուցի» :

Նիկողայոս գրիչ, որ ինքզինք այլուր Մեկանաւոր կը կոչէ, քաղմա վաստակ գրիչ մըն է որմէ երկու տասնեակ և աւելի ձեռագիր հասած է մեզի : Ձեռագիրը ժամանակին հաւանաբար արժաքապատ էր :

Յ. ԳԻՒՐԵՆԿ

(Շար. 1)

